



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ**

« 15 » 03 2021թ.

№ 08/ԼԱ/ - 137

**Մարտի 8-14-ը դիտված հիդրոոդերևութաբանական
պայմանները ՀՀ-ում**

Մարտի 8-ին, 11-12-ին հանրապետության ողջ տարածքում, 9-10-ին, 13-14-ին առանձին շրջաններում դիտվել են տեղումներ: Տեղումների գումարային առավելագույն քանակը կազմել է Ջերմուկում՝ 52,7մմ, Գորիսում՝ 45,8մմ, Որոտանի լճ.-ում՝ 45մմ, Արենիում՝ 42մմ, Պուշկինի լճ.-ում՝ 40մմ, Սեյյունովկայում՝ 32,7, Տաշիրում և Սիսիանում՝ 32մմ, Ստեփանավանում՝ 31,4մմ, Ապարան լճայինում՝ 29մմ, Ապարանում՝ 28,7, Անանունի լճ.-ում և Օձունում՝ 28մմ, Կապանում՝ 27մմ, Արտաշատում, Արագած բարձրլեռնայինում և Ամբերդում՝ 26մմ, Վանաձորում և Ճամբարակում՝ 25մմ, Իջևանում և Հրազդանում՝ 24մմ, մնացած շրջաններում՝ 9,6-23մմ քանակությամբ:

Օդի օրական միջին ջերմաստիճանը մարտի 8-ին, 11-ին նորմայից բարձր է եղել 1-4 աստիճանով (Տավուշում, Լոռիում և Սյունիքում՝ նորմայից ցածր 1-3), 9-ին՝ նորմայի սահմաններում (հյուսիսային շրջաններում՝ նորմայից ցածր 2-6), 10-ին՝ նորմայից բարձր 1-3 (հյուսիսային շրջաններում՝ նորմայից ցածր 1-2), 12-ին և 14-ին նորմայից ցածր՝ 2-5 (Արարատյան դաշտում՝ 1-2, Սյունիքում՝ 3-7), 13-ին՝ 3-8 աստիճանով:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է մարտի 10-ին: Արարատյան դաշտում, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց ձորի նախալեռներում գրանցվել է +10...+15°C (Արտաշատում՝ +16°C, Թալինում՝ +6°C), Սյունիքում, Տավուշում՝ +8...+13°C (Մեղրիում՝ +15°C), Լոռիում՝ +6...+8, Շիրակում, Գեղարքունիքում, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց ձորի լեռներում՝ 0...+5 (Գյումրիում՝ +8°C, Ապարանում՝ +6°C) աստիճան տաքություն:

Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է մարտի 13-ին: Շիրակում, Լոռիում, Գեղարքունիքում, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց ձորի լեռներում, Սյունիքի նախալեռներում գրանցվել է -13...-18°C (Աշոցքում՝ -24°C, Տաշիրում և Սիսիանում՝ -22°C, Ծաղկահովտում՝ -20°C, Գավառում՝ -19°C, Օձունում՝ -10°C), Տավուշում, Սյունիքի հովիտներում՝ -5...-10 (Դիլիջանում՝ -13°C, Մեղրիում՝ -4°C), Կոտայքի, Վայոց ձորի և Արագածոտնի նախալեռներում, Արարատյան դաշտում՝ -3...-8 աստիճան:

Շաբաթվա ընթացքում դիտվել է քամի 8-15մ/վրկ, պողոթյունները՝ մինչև 17-21մ/վրկ (Պուշկինի լճ.-ում քամու ուժգնացում՝ 13-20մ/վրկ, պողոթյունները՝ մինչև 20-26մ/վրկ) արագությամբ:

Մարտի 8-ին, 11-12-ին առանձին շրջաններում դիտվել է ձնաբուք և գետնաբուք 8-16մ/վրկ, պողոթյունները՝ մինչև 16-20մ/վրկ արագությամբ:

Մարտի 11-ին Սիսիանում ձյունը 4 ժամվա ընթացքում ավելացել է 20սմ-ով (12 ժամվա ընթացքում՝ 28սմ-ով):

Մարտի 15-ի դրությամբ ձյան ծածկը կազմում է Արագած բարձրլեռնայինում 142սմ, Որոտանի լքբ.-ում՝ 97սմ, Ջերմուկում՝ 90սմ, Ամբերդում՝ 80սմ, Անանունի լքբ.-ում՝ 55սմ, Սեմյոնովկայում՝ 49սմ, Հրազդանում՝ 46սմ, Ճամբարակում՝ 45սմ, Ամասիայում՝ 43սմ, Ապարան լճայինում՝ 37սմ, Աշոցքում՝ 34սմ, Սևանում՝ 30սմ, Սիսիանում՝ 28սմ, Ապարանում՝ 27սմ, Գորիսում՝ 22սմ, Պուշկինի լքբ.-ում և Տաշիրում՝ 20սմ, Մասրիկում՝ 19սմ, Ստեփանավանում՝ 18սմ, Մարտունիում՝ 14սմ, Ֆանտանում՝ 11սմ, մնացած շրջաններում՝ 1-6սմ: Արարատյան դաշտում ձյան ծածկը բացակայում է:

Լեռնային շրջաններում աշնանացան ցորենի շարունակվել է գտնվել ձմեռային հանգստի շրջանում: Աշնանացանի համար վտանգավոր ջերմաստիճաններ չեն գրանցվել:

Մարտի սկզբին հովտային շրջաններում եղանակային պայմանները նպաստավոր են եղել դաշտային աշխատանքներ իրականացնելու համար: Խաղողի դաշտերում կատարվել է այգեբաց և էտ:

Հովտային շրջաններում գրանցված բարձր ջերմաստիճանների հետևանքով բազմամյա միջին արժեքներից 30 օր շուտ աշնանացան ցորենի վեգետացիան վերսկսվեց, ծիրանենու բողբոջները ուռչեցին, սակայն մարտի երկրորդ կեսին ջերմաստիճանների նվազման արդյունքում բողբոջների աճը դանդաղեց: Մերձավանում այն գտնվում է ուռչած, իսկ Արարատում, Արտաշատում՝ փոքր-ինչ բացված վիճակում:

Շաբաթվա ընթացքում հանրապետության գետերում բնական էական փոփոխություններ չեն դիտվել:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում բարձրացել է 1սմ-ով և կազմել՝ 1900.58մ (14.03.21թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից բարձր է 14 սմ-ով:

Հարգանքով՝

Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Լ.Ազիզյան